

7104. ՏԱՐԵԴԱՐՁ ԱՊՐԻԼԵԱՆ ԵՂԵՌՆԻ

Ինչպէս ուրիշ տարիներ եւ ինչպէս աշխարհի բոլոր հայաբնակ քաղաքներու մէջ, Երուսաղէմի մէջ ալ այս տարի նշուեցաւ թախծաբեր տարեդարձը Սեծ Եղեռնի:

24 Ապրիլ, Հինգշաբթի առաւօտ, հանգստեան հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: (Ս. Պատարագ մատուցուեցաւ նաեւ Հայ-Կաթողիկէ եկեղեցւոյ մէջ): Պատարագեց Գերշ. Տ. Դաւիթ Եպս. Սահակեան, որ «Հայր մեր»էն առաջ խօսեցաւ Եղեռնի ընոյթի եւ տարողութեան մասին, վեր առնելով բազմատանջ Հայ ժողովուրդին վերապրելու եւ գոյատեւելու կամքը, որ գերագոյն փաստն է վերջնական յաղթանակը բարին ու արդարութեան վերապահուած ըլլալու լոյս իր հաւատքին:

Ս. Պատարագէն ետք. Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն: Ապա, Նորին Ամենապատուութիւնը անցաւ գլուխը երկարածից թափօրին, որ Հայ Երիտ. Միութեան Արիններուն եւ Արեւնոյններուն առաջնորդութեամբ, ծաղկեպսակներով եւ ցեղասպանութիւնը դատապարտող բազմալեզու յոգունգներով ուղղուեցաւ Ս. Փրկչի ազգս լին գերեզմանատունը, ուր Արարայի Նահատակաց Յուշարձանին մօտ կատարուած պաշտամունքէն ետք. խօսք առաւ Հ. Ե. Միութեան Ատենապետ Տիար Յակոբ Գարակէօզեան, որ ներկայ սփիւռքի նսեմ իրականութեան Մայր Հայաստանի վսեմ իրականութիւնը իբր փաստ մեր անընկճելի ոգեկանութեան:

Ժողովուրդը ապա խաղաղ ցոյցով մը վերադարձաւ Մայրավանք, անցնելով պարիսպի հարաւ - արեւմտեան անկիւնէն եւ մտնելով Յոպպէի դռնէն, անցորդներու — բազմապատկուած՝ Հրէական Պասքի առաջին օրը ըլլալուն — ուշադիր եւ հետաքրքիր նայուածքին: Հայրենասիրական երգերով յառաջացող թափօրը իր աւարտին հասաւ Հայ Երիտ. Միութեան ակումբին մէջ, ուր տրուեցաւ հոգեհոսուց:

Կէսօրը անց էր երբ ամէն ոք իր տունը դարձաւ յոգնասպառ:

ՀԱՂԵՆՈՐԱԿԱՆ ՀԻՒՐՆԵՐ՝ Ս. ԶԱՅԿԻ ՏՕՆԻՆ ԱՌԻՔՈՎ

Ս. Զատկի տօնին առթիւ, այս տարի մեր մէջ ունեցանք 10 հոգեհոսականներու պատկառելի հոյլ մը, ժամանած տարբեր երկրներէ: Այսպէս, Ամերիկայէն ժամանեցին Կիլիկեան թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ Աբքեղոս. Աշնեան՝ Նիւ Եորքէն, Ս. Ուխտիս Միաբան Հոգշ. Տ. Ժիրայր Վրդ. Թաշնեան եւ Արժ. Տ. Մուշեղ ՔՇյ. Տէր Դաւիթաւան, Յրանապէն՝ Փարիզի Առաջնորդ Գերշ. Տ. Գրիգոր Եպս. Նազգաշեան եւ Լիոնի Առաջնորդ Գերշ. Տ. Նորվան Եպս. Զարարեան: Անթիլիասէն՝ Գերշ. Տ. Վարդան Եպս. Տէմիրճեան, Հոգշ. Տ. Կոմիտաս Ծ. Վրդ. Օնանեան, Հոգշ. Տ. Գեղամ Վրդ. Խաչերեան եւ Հոգշ. Տ. Բարգէն Արդ. Զարեան: Կիպրոսէն՝ Արժ. Տ. Վազգէն ՔՇյ. Սանտրուսի: Ժամանեց նաեւ, Աւագ Հինգշաբթի օրը, Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ երկեսեւ Երզնաստանը, գլխաւորութեամբ Դպրապետ Տիար Հայրապետ Թորոսեանի, որ Կոմիտասեան դաշնաւորութեամբ հանդէս եկաւ երիցս, Շարաթ երեկոյեան ձրագալոյցի Պատարագին, Զատկի առաւօտուն՝ Ս. Գերեզմանին վրայ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին եւ Երկուշաբթի, Մայր Տաճարին մէջ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին: Կային նաեւ մի քանի աշխարհական ուխտաւորներ, Շուէտէն եւ Ամերիկաներէն: Զատկի յաջորդ օրերուն, բաւական ալ վերադարձան իրենց պաշտօնավայրերը, բացի Տ. Ժիրայր Վարդապետէն, որ մեր մէջ մնաց մինչեւ 28 Մայիս, երբ վերադարձաւ Մայամի, Յիւրթա, ուր փոխադրուած էր վերջերս հովուական պաշտօնով: